

Հաշվետվություն

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի
ներքին աուդիտի բաժնի 2013թ. տարեկան

Ներքին աուդիտի բաժինը՝ ղեկավարվելով „Ներքին աուդիտի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները, 2013թ. ընթացքում 53 միավորներում համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել ներառելով 2010, 2011, 2012թվականները:

Ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբը աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտանաբերել է բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ էլ կազմվել են աուդիտի արդյունքների մասին արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա էլ կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

Վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում, կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են գործողության ծրագրեր:

Գործողության ծրագրերում աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին առաջարկություններ է արվել.

1. Բարելավել կազմակերպության ներքին հսկողության համակարգը, ինչպես նաև վերացնել ներքին աուդիտի վերջնական հաշվետվություններում ներառված բոլոր թերությունները:
2. Հանձնարարվել է վերականգնել ՀՀ պետական բյուջե **6.296981** ՀՀ դրամ, որը առաջացել է
 - ՀՀ կառավարության 2007թ փետրվարի 1-ի թիվ-201-Ն որոշման՝ ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները խախտելու հետևանքով **4.446045** ՀՀ դրամը:
 - ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգի բյուջետային հիմնարկների ըստ վարձատրության խմբի դասակարգման չափանիշները՝ մանկավարժական աշխատողների կարգերի սխալ տարբերակման հետևանքով **984936** ՀՀ դրամը:
 - ՊՈԱԿ-ի կանոնադրության պահանջները խախտելու՝ ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակների և ՊՈԱԿ-ի խորհրդի որոշումների անհամապատասխանության հետևանքով **866000** ՀՀ դրամը:

Գործողության ծրագրերում ներառված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու և թերությունները վերացնելու համար աուդիտի ենարկված միավորների ղեկավարների հետ կազմվել է ժամանակացույց: